

ես տեղն գնամ ունիմ իշխանութիւն տնօրինելոյ և օրհնելոյ: Բայց ես ըստ հրամանի ձերում արանց ըստպատելոյ նորա զալուստեան յղելոց եմ գտնօրինումն, քանզի թէպէտ իւրեան չասի, լինի թէ ունի զիշխանութիւնս այս, բայց կարծեմ ոչ ի յարևմուտս այլ ի յարևելս:

Սոյն Պատրիարքոս ունի իշխանութիւն ժԲ քաւալիէր առնելու. կամի և ասաց աղայչա պետրոսին. Քեզ քաւալիէր կանեմ. և սա կերևի որ փափաք և կամք ունի լինելոյ սինեօր քաւալիէր: . . .

Ամի տեառն 1742  
Դեկտեմբերի 22 [ի Հոռով]

Խոնարհագոյն ծառայ  
[պատկերահան] Յոհաննէս

**ՃԺԶ.**

Մխիթարայ և անոր Ուխտին հանդէպ տածած ամենամեծ համակրանքն ու յարգանքն է որ կը կարդանք Քահանայապետին առջեւ Աբրահամ կաթողիկոսէ արտայայտուած զգացումներուն և խօսքերուն մէջ:

Կը պարունակէ վաւերաթուղթս նաեւ Պատրիարքին ջատագովականը Մխիթարայ հրատարակած Աստուածաշունչին թարգմանութեան վաւերականութեանը մասին:

Գերշարգելի տերութեան ձերում որդիական յարգութեամբ ողջոյն մատուցանեմ

. . . Վասն գերապայծառ Պատրիարքին կողմանէ յայտ լիցի հրամանուցդ, որ հաստատ դիտաւորութիւն ունի վէնէտիկ գալու ոչ այլ աղաքաւ այլ միայն հրամանքդ տեսանելու համար. քափն հարցաւ իւրն թէ որ ճանապարհաւ դառնալոց է ի յարևելս և սա պատասխանեց. թէպէտ դիտարին է ինձ ալիկունայու վերայով գնալ բայց հարկաւորապէս պիտի վէնէտիկ գնամ վասն Աբբա Մխիթարն տեսանելու աղաքաւ. և նա թէ ո՞վ է Աբբա Մխիթարն, սա կրկնեց թէ այն է որ երկու Աստուածաշունչք յոյց Սրբութեան ձերում: Եւ նորա հրամանուցդ և կոծնի մեծ արդիւնքն ի վերայ յազգին հայոց կարծորէն ծանոյց. այդ երկու Աստուածաշունչին մինն իւր ձեռքն փափն շնորհեց սորայ, հանգերձ այլ գրգերով. իւր հետ եղեալ անձինքն են սորայ. Սահակ եպիսկոպոսն, տէր Նիկողայոսն և երկու աշխարհական ըստպատուրք, մինն հալէպցի և միւսն էնկուրցի. թէպէտ ետոյ ի ժամանակին կու ծանուցանեմ եթէ սորայ իւր հետն կուգան թէ ոչ, քանզի տէր նիկողայոսն կամի բաժանվիլ վասն ազատաբար ապրելոյ:

Ամսի 9-ին քոլէնի տօնն էր, որոյ աղաքաւ մեծաւ յարգութեամբ սեղան կոչեցին զՊատրիարքն, ուր ետ սեղանին ընդ մօտնեօր մօնդին և մօնսինեօր ասիմանին խոսակցութիւնս եղեր է ի վերայ Աստուածաշունչին, քանզի ասած են նոյն մօնսինեօր մօնդին թէ Աստուածաշունչն տարբերութիւն ունի մտքումա? աստուածաշունչն, և Պատրիարքն ճարտարաբար պատասխանելով նոյն մօնսինեօր մօնդին և անդ եղելոց ոչ միայն ոչընչացոյց զկարծիքն նոցին, այլ եցոյց նոցա թէ որչափ ջանիւ և աշխատութեամբ ներկայութեամբ է լեզուով Աստուածաշունչի սրբագրեցեալ է և ուղիղեալ ամենայն սրղալանաց. այս պատճառաւ տեսեր է Բ Աստուածաշունչ մոտ նոյն մօնսինեօր մօնդին. . . :

Աղա Պետրոսն մինչեւ յաժմս երբեմն գնալու եղաւ և երբեմն մնալու. և յաժմս մին քանի խընդիրք ունի փափէն վասն որոյ պիտի սպասէ: . . .

Ամի տեառն 1743 յունվարի 12  
[ի Հոռով]

Դրառայ  
[պատկերահան] Յոհաննէս

**ՃԺԷ.**

Շատ կարևոր թուղթ մ'է հետևեալը:

Նախ կը տեղեկանանք, որ Բենեդիկտոս ԺԴ. մասնաւոր Քննիչ կը կարգէ Հոռովայ մէջ մեր Աբրահամ կաթողիկոսը, «ա» ի որունը և քննել զեպիսկոպոսունս և